

ԸՆԿԵՐՆԵՐ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Կամուրջներ

Մաս 1

«Եվ ոչ միայն այսքանը, այլ նաև դեռ պարծենում էլ ենք Աստծով, մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհիվ, որին միջոցով հիմա հաշտվեցինք Աստծու հետ:» Հռոմեացիներին 5:11

«Եվ այս նորոգումը գալիս է Աստծուց, որ Քրիստոսի միջոցով մեզ հաշտեցրեց իր հետ ու նաև պաշտոն տվեց մեզ՝ ուրիշներին էլ հաշտության բերելու:» Բ Կորնթացիներին 5:18

Ինչպե՞ս կառուցել կամուրջ դեպի անհավատները

Առաջի քայլը դու վերցրու

«Ինչ որ ուզում եք, որ մարդիկ անեն ձեզ, դուք էլ նո՛ւյնը արեք նրանց:» Ղուկաս 6:31

Հրաժարվիր դիմակ կրելուց

«Պարծենալով կարող եմ ասել, և խիղճս էլ վկայում է, որ բոլորի հանդեպ եղել եմ պարզ ու անկեղծ.» Բ Կորնթացիներին 1:12

Գտիր ընդհանրություն

«Մի խոսքով՝ ամենքի հետ ամեն ինչ եղա, որպեսզի ամեն գնով կարողանամ փրկել ոմանց:» Ա Կորնթացիներին 9:22

Ցույց տուր Աստծո սերը

«Նմանվեցե՛ք Աստծուն... և շարժվեցե՛ք սիրով, ինչպես որ Քրիստոսը սիրեց մեզ...» Եփեսացիներին 5:1-2

«Որդյակներ, չ'սիրենք խոսքով և ոչ էլ լեզվով, այլ գործով և ճշմարտությունով:» Ա Հովհաննես 3:18

«Մենք պատրաստ էինք ոչ միայն Աստծու ավետարանը ձեզ փոխանցելու, այլ մեր կյանքն էլ տալու, այնքան, որ սիրելի էիք դարձել մեզ:» Ա Թեսաղոնիկեցիներին 2:8

Արժեք տուր նրանց զգացումներին ու վախերին

«Մեզնից յուրաքանչյուրը պետք է հետաքրքրվի իր շուրջը եղողներով՝ մտածելով նրանց բարիքի մասին՝ նրանց հավատն ամրապնդելու...» Հռոմեացիներին 15:2

Սպասիր որ Աստված գործածի քեզ

«... հոգ մի՛ արեք, թե ի՛նչ պիտի ասեք կամ ինչ՛ պես պիտի ասեք, որովհետև ինչ որ պիտի ասեք, այդ ժամին պիտի տրվի ձեզ. Քանի որ խոսողը դուք չեք լինելու, այլ ձեր Հոր Հոգին, որ պիտի խոսի ձեր միջոցով:» Մատթեոս 10:19-20

Ի՞նչ պիտի լինի իմ բաժինը

«Մեր միակ ձգտումն է հաճելի լինել Աստծուն... մենք բոլորս էլ պիտի կանգնենք Քրիստոսի աստյանի առաջ... Քրիստոսի սերն է ստիպում մեզ այսպես վարվելու: Գիտենք, որ Քրիստոսը մեռավ բոլոր մարդկանց փոխարեն.» Բ Կորնթացիներին 5:9-11, 14

Հաջորդ Քարոզի Թեման
ԿԱՌՈՒՅԵԼ ԿԱՄՈՒՐՁ
ԱՄՈՒՄՆԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ
Հովիվ Սարո Խաչիկեան